

տապարտէր ըստ արտաքին երևութիւն տկար ծնեալ մանկունան, որք կարէին լե- նել հզօր զինուորք ի ժամանակին, և զա- սողջս կարծելով առաւել ևս հաստա- տուն գործել, ցուրտ ջրոյ մէջ ընկղմէին իւրեանց մօր զրկէն անմիջապէս որոշէին զկնի: Աղէտապի փորձ, որ ի մեր ժամանակս անդամ ունի իւր կոյր կուսակիցս:

Բայց ո՞, ո՞ր անձն բարեկգած չ'պիտի քրտամբք թաթաւի այդ ուռկանի մէջ: Ահգուրկոս և մեծ մասն մեծամեծաց հը- նոց առաւել ցանկային ունել բազմաթիւ զօրականս՝ քան թէ մտախոհս. այսպէս ևս խնդրէի՞ն արդեօք զարգացուցանել ըզ- մարմին. նոքա մարդէին ջիւս առաւել քան ուղեկս. նոցա ուսմանց մէջ մարմ- նամարզութիւնն ունէր առաջին տեղին. Սպարախ և թէքայիդ ըմբռօք ճոխանա- յին, բայց հեռեկով փորձոյ Վաբանիսի՝ ըմբռիչք նախնեաց ժամանակին անհոյ մարդկան կարգին վերաբերէին:

Երեք տեսակ ազգու ներգործութիւնք են ասողջութեանց: Սեղնէ՛, որով ապ- րիւք, Երբարտասար մարմնոյ փորձարկելով, և Խոտանեալ փոյր-նիւնէ՛:

(Շարժմանիւն):

Թ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԳԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ.

Ո՞ր եւ իցէ աշխարհի՛ Սղղի եւ ընկերութեան յա- ռաջադիմութեան եւ պայծառ յարատեւութեան համար զկաւար պէտք եւ միջոցներէն է Ողջամիտ կարծեաց ազատութիւնն:

Ուր կ'պակասի այս զօրութիւն՝ անդ չ'իք յարատեւ յարաջադիմութիւն եւ կենդանութիւն:

Սակայն կարծեաց ազատութիւնն կ'պահանջէ ան- շուշտ եւ առաւել արդիւնաւոր կզործէ երբ զուզըն- թաց աջակից ունի զՄարեոյ ազատութիւն, որով ողջա- միտ կարծիք եւ խորհուրդներ առանց անձուկ սահմանի մէջ կ'աւանդելոյ եւ խեղդուելոյ՝ հրապարակական ա- տեսաններ այս ինքն բանիմաց ժողովրդեան դատաստա- նին կնեակայանան հրատարակութեամբք, եւ արժանի ներգործութիւնք եւ արդիւնք եւ կամ բացասութիւ- նը կ'ստանան: Արովհետեւ մինչ բանասէր մի անձն մի խնդիր կ'յուզէ, այդ խնդիր ենթարկուելով բազմաց ապատ եւ ողջամիտ կարծեաց եւ դատողութեանց՝ այնպէս կ'մշակուի՝ զի առաւել օգտաւէտ կերպարանք կ'զգենու եւ զօրծնական արդիւնք կարտադրէ հասա- րակաց զարգացման եւ բարօրութեան համար:

Իսկ Մարեոյ ազատութիւնը պէտք չէ եղրակացնել յսկ հիկն եւ նոր մասեւեգրութեանց հրատարակութեանց մէջ, — որոց արդիւնք՝ ըստ տեղայն եւ պարագայիցն՝ ոչ այնքան նշանաւոր կարող են լինել. — այլ յատկա- պէս հրապարակական պարբերութեանց, այս ինքն օ- րական, շաբաթական եւլն. լրագրաց եւ ամսաթերթից մէջ կրպահանջուի այս, որոց օրական եւ ամսական զիրքեր շատ յարմարութիւններ ունին եւ բազմարդիւն հանդիսանալ կարող են:

Ըստ այսմ արդարեւ հրապարակական պարբերու- թիւնք՝ երբ հմուտ, ողջամիտ եւ անկեղծ խմբագրու- թեանց եւ անօրինութեանց տրամադրութեանց ստո- րադրեալ կ'հրատարակուին, եւ զբական ասպարիզին մէջ մոխ եւ բարի նպատակներ մեկերած եւ բեռնա- ւորած կզործեն, հանապազօրեայ լուրերով ժողովր- դեան հետաքրքիր ուշադրութիւնք հրապուրելով ոչ թէ միայն ընթերցասիրութիւն կուսուցանեն եւ կտարա-

տար սպանանել ըստ երևութիւն տկար ծնեալ մանկունան, որք գուցէ կարէին հզօր զինուորք հանգիսանալ. որոց ճիշտ նմանութիւն է խառ- նել մեղր լեղւոյ հետ, որպէս Մ. Տ. օրինաց հետ և սնապաշտութիւնն:

ծեն, ոչ թէ միայն հեռաւոր աշխարհներ եւ այլ եւ այլ ժողովուրդքը եւ ազգերը միմեանց հետ կծանօթացնեն, եւ տպագրական մամուլոյ յարաբերութեամբք կը միացնեն, իւրաքանչիւրոց կենցաղավարութենէն, աւտընին եւ հասարակական ընթացք եւ գործքերէն ամեն տեսակ տեղեկութիւններ քաղելով կհաղորդեն, նոցա ընտանեկան եւ ընդհանրական վարմանց, շարժմանց, սովորութեանց, յարաբերութեանց, գործունէութեանց, արդեանց եւ այլոց վերայ զաղափար եւ օրինակ կտան, զանազան վատ հանգամանաց եւ գործոց նկատմամբք եւս ի զգուշութիւն հրաւիրելով, նորահրնար մեքենագործութեանց, զիւտոց, արհեստից առ եւ տրոց, վաճառականութեանց եւ այլոց վերայ տեղեկութիւններ կընդունին եւ կհրապարակեն, կարծիքներ, զիտողութիւններ եւ խորհրդածութիւններ կյաւելուն, եւ միմեանց նախանձը զրգռելով, վերջապէս ոչ թէ միայն տեղական այլ եւ այլ պակասութիւնքը ի վեր կհանեն եւ ուրիշ տեղեկութիւններ հաղորդելով այլոց հեռաքնակաց ուշադրութիւնքը կհրաւիրեն, այլ մանաւանդ, որ առաւել մեծն է, խմբագրութիւնք հմուտ, ողջամիտ եւ անկեղծ լինելով եւ համայն աշխարհի հետ ըստ մտաւորականին եւ մամուլը յարաբերութիւն ունենալով, կմտանեն ժողովրդեան մէջ, կթափանցեն նոցա կարօտութեանց եւ զաղափարաց մէջ, կշօշափեն թերութիւնքը, կկշռեն բարոյական եւ մտաւորական պակասութիւնքը, արհեստագիտական յատկութիւնքը, եւ կարողութիւնքը, երկրագործական գործողութիւնքը, միանգամայն զիտելով եւ ժողովրդական այլ բազմատեսակ վնասներ հանգամանքները՝ կարծիքնեն եւ կոգեւորեն զժողովուրդ, կարելի միջոցները՝ զարմանները եւ ապահովութիւնքը կառաջարկեն, կուսուցանեն եւ կտարածեն, կըննադատեն ու կբաղդատեն զհինն ընդ նորոյն, կփաստաբանեն օգտաւէտութեան կամ ներհակին վերայ, կառավարութեանց կաշակցին եւ վնասաւթները կհալածեն, մինչև անգամ շատ պատահմունքներէն օգուտ կբաղեն, գործադրութիւնքը կպահանջեն կամ կինդրեն, այնպէս որ՝ նոցա անկեղծ եւ սրտացաւ գործք եւ ազդեցութիւնք մեծ բարութիւններ կարտադրեն եւ կբեղմնաւորեն :

Թէ եւ ամեն պարբերական թերթք մի եւ նոյն ուղղութիւն չկարեն կրել, որք զանազան ճիւղերու բաժանուելով՝ այլ եւ այլ նպատակներ ունին, բայց եւ

այնպէս՝ բարենպատակ ըզծից մէջ տարբերութիւն չըկայ, եւ միշտ ժողովրդեան համար է եւ մեծ օգուտ կարող են տալ այս կամ այն ուղղութեան մէջ, որք միանգամայն բարոյն եւս ի բարօրութիւն նոցա (ժողովրդեան) կվերաբերին :

Արդ Հայոց մէջ եւս կան ազգ. պարբերական թերթեր, որոց շատք շարձական, ոմանք օրական, սակաւքն ամսական, սորա եւս իբրեւ Օրագիր կամ Լրագիր՝ Հայոց համար պիտի ունենան մի եւ նոյն ուղղութիւն եւ նպատակ՝ ինչ որ վերագոյն ասացաւ, եւ որքան պարագաներն կներեն, եւ որքան տեղական ինչ ինչ հանգամանքներն կթելադրեն՝ պիտի ջանան ազգային նախադաս պահանջներն եւ օգուտներն զիտել, կշռել, քարոզել, նուիրագործել, եւ խրախոյս տալ :

Առանց խստապահանջ հանդիսանալոյ, եւ առանց մոռանալոյ նիւթական, բարոյական եւ տեղական միջոցները, այժմ թող հետազօտուի՝ թէ ի ներկայս մեր ազգ. պարբերական թերթերն որքան հաւատարիմ եւ նախանձախնդիր են իւրեանց պաշտօնից եւ պարտաւորութեանց մէջ :

Սակաւ բացառութիւնը յիշելով, մնացեալքն կբաժանուին ըստ հետեւելոցս զխտարապէս :

Նախ ազգ. պարբերական թերթից մեծագոյն մասի խմբագրութիւնք չունենալով՝ նիւթական կարողութիւն եւ ապահովութիւն, եւ ապաւինելով ձեռնտուութեանց եւ նպատակից՝ եթէ ոչ բարոյն՝ զէթ բազումք սակաւաժամանակեայ շարունակութեան մէջ կվհատին, եւ պարտուց ենթարկուած եւ ճնշուած կդատապարտուին ասպարէզէն՝ հեռանալոյ եւ իւրեանց ձեռնարկութիւնքը կխափանեն :

Երկրորդ՝ բազումք թէ եւ որոշ մի ուղղութիւն եւ զրօշակ պարզած կծեանան եւ ի հանդէս կյաճախեն, սակայն փորձառական եւ գործնական հմտութիւններէն զուրկ գտնուելով հանդերձ, օրինաւոր եւ գործօն շակիցներ կպակասին նոցա, եւ մտաւորական մթերանոցի անկարող եւ ազբատ մատակարարութիւնն եւս սպառելով՝ կվիճակուի ալեաց մատնուած ծովակուր անձի դրութեան :

Երրորդ՝ սակաւք ոմանք թէպէտ ունին նիւթական միջոցներ եւ ապահովութիւն, սակայն զուրկ են հմուտ եւ փորձառու տնօրէնութենէն, եւ վերացական հիմնարկութիւններ երեւակայելով՝ կամ յաճախակի փո-

փոխութեանց ենթարկուած՝ երերուն եւ անգոյն վիճակի զորուած են: Եւ կամ վարձեալ լինելով՝ կենտեւին osar զաղափարաց եւ սպանաբնակց, եւ ըստ այնմ կրօնընէն խրեանց պարտաւորութիւնքը:

Չորրորդ՝ սակաւ ոմանք մի տարօրինակ նպատակ յղանալով եւ զայն յառաջ մղելոյ համար այլոց վերայ բռնանալ երազելով, երբ զժուարութեանց առջեւ կընկճուին, նախանձոտ ոգեւորութեամբ մոլեալ եւ կուրացեալ կթաւալուին հակազգային դրից մէջ եւ այնպէս կսեռենեմեն եւ կխայտառակուին:

Ապաքէն այսպիսի վիճակի մէջ եղած ազգ. պարբերական թերթերէն ինչ եւ որքան օգուտ կարելի է սպասել, երբ վերոյիշեալ պատճառներէ բռնազրօսեալ՝ ոմանք այլ եւ այլ սկզբանց եւ ուղղութեանց մէջ կկադան, առ ի չգոյե հիւրոյ՝ կայրկուրայն ընթացից մէջ կզահափօժուին, կամ կստիպուին այս եւ այն կուսակցութեանց կոյր գործիք լինել, իրրեւ մերենայ խօսել եւ դործել այլոց բռնադատեալ, կամ անձնական դուղնարեայ՝ չնչին օգտից համար անգամ՝ յանիրաւի զայս ջատագովել եւ զայն պարստել, զբարտեղ, եւ հայածել, առանց ականատես լինելոյ՝ կամ առանց երաշխաւորեալ հաւաստեօք վերահասու լինելոյ՝ ի շրոյ հաստացած եւ յափշտակուած՝ զոմն յերկինս կբարձրացնեն, եւ զայլ ոմն յանդունդս թաւալել կերեւակային, կդատեն՝ զոր ոչ կարող են իմանալ եւ ոչ խելքներն կթափանցէ կշռել. ոմանք նոյն իսկ իւրեանց անձերը կառավարելոյ անկարող լինելով՝ հեռաւոր անձերը եւ գործերը կդատեն, պատգամներ կորոտան, ոմանք յօղուածոց եւ լրոց սովու մէջ տաղանայելով՝ ինչ որ այլք դրեն՝ ինչ որ լսեն՝ ինչ որ սուտ եւ սխալ կբաղեն՝ առանց ստուգելոյ կամ ստուգելի ետեւելոյ՝ անմիջապէս կհրատարակեն՝ որպէս զի իւրեանց բերերը շքուած լինիմ: Ոմանք այնպիսի խընդիրներ կյուզեն՝ որք ոչ թէ միայն ներկայիս մէջ օգուտ չունին կամ կարելի չեն, այլ մասնաւոր առաւել Օսար շահուց կծառայեն, եւ փոխանակ յոնքը յարգարելոյ՝ զաչան կփորեն: Սակաւ ոմանք վարձեալ գործիք լինելով՝ ոչ թէ միայն սեւին սպիտակ՝ եւ ըսպիտակին՝ սեւ ասելոյ պարտաւորեալ եւ մոլեալ կբաղնեն, այլ նա եւ Եկեղեցւոյ եւ Եկեղեցականաց վերայ յաւէտ անուղի զբարտաւորութիւններ կաեղան, եւ կտքնին յաչս ժողովրդեան ատելի եւ զղուելի ներկայացնել, արարողութիւնքը ծաղրել, կիրակիին կիրակոս

անուն կնքել եւ վատարանել, այս եւ այն լրագիրը զբարտեղ, վարկը զեանահարել ատելի իմն նախանձոտութեամբ, եւլն եւլն: Վերջապէս կան ոմանք եւս, որ Յօնանու թմաման նման՝ կարճատեւ շարունակութեան մէջ անդամ, կխարխափեն եւ նոցա ինչ գոյն ունենալներն իմանալ զժուարին կլինի:

Մտրա պատճառ չեն՝ որ շատ տեղ շատ պարբերական կամարդուին, մինչեւ անգամ փոխանակ ժողովրդական ընթերցասիրութիւնը հրապուրել զրդեղոյ եւ բազմապատկելոյ հսկայաբայլ յառաջադիմութեամբ, բազմաց զգուանք կպատճառեն եւ յամբ ընթացքով կբտարածուին, թող որ ի տեղիս տեղիս իրրեւ անբարոյականութեան աղբիւրներ կնկատուին, կամ ժողովրդական հրապարակական ցոյցերով ի հուր կմատնուին թերթերն:

Այս եւ այսպէս են ուրեմն ազգ. հրապարակական պարբերութեանց պաշտօնք եւ պարտաւորութիւնք, որով ազգային կենսական խնդիրներ բարձի թողի մնալով, դատարկարան յօղուածներ կհրատարակուին, ոմն տարածամ կամ անժամանակ եւ կամ անյարմար եւ բազմակեցիւ մի բան կպահանջէ, այլ ոմն Սահմանադրութեան հարուած տալ կխիզալի եւ կերեւակայէ, ոմն Մասիսի զազաթան պատգամներ կուղղէ, այլ ոմն Ախուրեան զետոյ եւ Եփրատայ անդունդները (՝) կչափէ, որ մէկն ասեմք:

Արդարեւ այս շատ ցաւալի դրութիւն է:

—Ո՛հ, ս՛յայէս կնախատուին եւ կսղծուին կարծեաց եւ Մաճկոյ ազատութիւնք, եւ ի փոխարէն՝ կոյր կրից եւ ատելութեանց սին զրօշներ կծածանին, եւ այն ի վնաս եւ ի կորուստ Ազգի եւ Եկեղեցւոյ մերոյ:

Ի վերայ այս ամենայնի՝ սորօք պէտք չէ Ազգ. պարբերական թերթից ցարգարդիւնաւորած բարութիւնքը իսարսու ուրանալ կամ վարագորել, որ անկարելի է. վասն զի կանխաւ այլ լրագիրք՝ ինչպէ՛ս եւ ի ներկայս սակաւ ոմանք բաւական ազգօգուտ ծառայութիւնք մատուցին եւ կմատուցանեն: Մեր նպատակ ներկայիս մեջ Ազգ. պարբեր. թերթից վիճակը հետազօտել եւ նոցա վերայ մասնաւոր զաղափար տալ լինելով, միանգամայն կըղձամք՝ զի որոց անկ է՝ այս համառօտ դատողութիւնքը ուշադրութեան առնելով՝ զզան իւրեանց սակաւութիւնքը, զզան Ազգիս եւ Եկեղեցւոյ պահանջները եւ օգուտները, հեռանան

անձնական կիրք եւ ատելութիւններէ, զգուշանան տարածամ կամ ազգավնաս խնդիրներ յարուցանելէ, ընտրութիւն գործեն իւրեանց հրատարակութեանց մէջ եւ անհիմն եւ ստապատիր գրութեանց տեղի չտան, աշխատին ժողովրդեան մէջ ընթերցասիրութիւնը տարածել, նոցա կարողութեանց յարմար եւ հետաքրքրական տեղեկութիւնք հրատարակելով՝ նոցա մտքերը մշակել, դաստիարակութեան խնդիրը ազգօգուտ իմն խորհրդածութեամբք՝ շրջանկատ հեռատեսութեամբք զարթուցանելոյ եւ արդիւնաւորելոյ, առանց վատաբանիչ եւ կռուայոյզ բանադատութեանց՝ եւ առանց խստապահանջ յարձակմանց՝ դպրոցները բարեկարգելոյ համար օգտակար տեսութիւններ մատակարարել եւ խրախոյսկարդար, միանգամայն՝ բժախնդրութենէ ըստ կարեւրէն խոյս տալով՝ Ազգ. եւ Եկեղ. հաստատութեանց ասպնդութեանց եւ արդիւնաւորութեանց հոգ տանել խնդրեն :

Ազգային հրատարակական պարբերութիւնք՝ ինչպէս այս ամենը, նոյնպէս ողջամիտ կարծեաց եւ մտայն ազատութիւնք քաջ իմանալով՝ պէտք է որ իւրեանց պարտաւորութիւնքը նուիրական ճանաչեն, պաշտեն եւ յարգեն, միանգամայն բարոյական զեղեցիկ օրինակներ տան : Ապա թէ ոչ՝ մանաւանդ երբ զօրկ են կարևոր միջոցներէ՝ լաւ է որ խոյս տան ասարելագէն եւ վէրքի վերայ վէրք չը յաւելուն :

Վ.Ա.Լ.Բ.Մ. Վ.Ա.Բ.Մ.Պ.Յ.Տ. Մ.Ա.Ն.Կ.ՈՒՆ.Ի.

ՆՈՐ ՏԱՐԻ

- Յարլ ամաց թուականաց շրջանակ
 - Վարչական ազգամեծար մեղ Ա. անդ
 - Իղծ ի սրբուէ յարե հանեալ զՀայն՝ եղբօր
 - Զօր բարեբաւտ մաղթել յերկնից ձրտեցան :
- Յողովս՝ պա Հայն ըզձաց մաղթեաց ընկերին
 - Բարեաւ կաղանգ և շնորհարեր զնոր Տարին. —
 - Սակայն ու՛ այսուիկ բիւր շարաբեր մատեան ամք
 - Եւ զարհաւիրս զսով և լիկանն ի մեղ ամին :
- Ընդէր — ո՛ւ Հայ — զի՞ յաղերս զս անանսաց
 - Պացին Երկինք. — է՞ քանզի սիրտդ ոխըզգած
 - Խնդրէ զոր ինչ չկամի եղբօրն բարգաւաճ
 - Եւ կեղծ լիզուաւ սուտ հայցս յղէ առ Աստուած :
- Բա՛հ — ի՞րր կտրես դու ժառանգել զայս արատ,
 - Արատ՝ որում խիղճ կոյ ի կազ և հաւատ,
 - Արգելք դընէ. — Գժտի՛ն Օրէնք բնական —
 - Զի գաւազրո՞ժ է սա Հայոյն ու նշաւակ.
- Բայց մինչ երկին և երկիր պերճ հրճուանօր
 - Զարթեալ ի քնոյ զարնան ի վայր շաղին ցօղք :
 - Եւ արտուտիկ ներ Աբողեաց դայլայլիկ
 - Յերկինս ի վեր զերգս ընծայէ և աղօթք :
- Յառնեն հաժայն շունչ և դալարք ի նոր տի
 - Գան բարեւել զպերճ եղանակն յիւր մտի. —
 - Իսկ դու մինչ սառն բուք և հիւսկէն մըրրկաց
 - Անշուք առնեն զզուարճութիւն քո յարկի :